ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԳՈՒՄԱՐՎԵՑ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎ

Մարտի 6 և 7-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ գումարվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի ժողով:

Ժողովը բացվեց Տերունական աղոթքով: Ողջունելով Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներին՝ Ամենայն Հայոց Հայրապետն իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց ժողովականներին՝ հաջողություն մաղթելով ժողովի աշխատանքներին: Այնուհետև Վեհափառ Հայրապետի կողմից կատարվեցին ծանուցումներ նախորդ ժողովի ընթացքին կայացված որոշումների կատարման ընթացքի վերաբերյալ:

Մինչ օրակարգին անցնելը Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները մտահոգությամբ անդրադարձան Հայաստանում ՀՀ նախագահական ընտրությունների արդյունքում ստեղծված ներքաղաքական իրավիճակին: Կարևորելով Հայրենիքում խաղաղության ու կայունության վերականգնումը, մարդկանց հոգիներում սիրո հաստատումը՝ Գերագույն Հոգևոր Խորհուրդը հանձնարարեց թեմական առաջնորդներին և նրանց միջոցով հոգևոր հովիվներին առավել զորացնել սիրո քարոզչությունը եկեղեցիներում՝ կոչելով ժողովրդին հանդարտության և համերաշխության:

Ժողովականները Նորին Սրբության գլխավորությամբ նաև աղոթեցին երկրի խաղաղության, ինչպես նաև մարտի 1-ի իրադարձությունների հետևանքով զոհվածների հոգիների հանգստության համար:

Երկօրյա նիստերն ատենապետելու հրավիրվեցին Տ. Աղան արքեպիսկոպոս Պալիոզյանը և Տ. Տաթև արքեպիսկոպոս Ղարիբյանը:

Օրակարգի համաձայն ժողովականներին ներկայացվեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2007 թվականի գործունեության տարեկան զեկույցը և ֆինանսական հաշվետվությունը: Գերագույն Հոգևոր Խորհուրդը զոհունակությամբ ընդունեց զեկույցները:

2008 թ. սեպտեմբերի 28-ին կատարվելիք Մյուռոնօրհնության արարողության նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ զեկույցով հանդես եկավ Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը: Որոշվեց ստեղծել Մյուռոնօրհնության կազմակերպման հատուկ հանձնախումբ՝ հանձնախմբի ատենապետ նշանակելով ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանին:

Այնուհետև Համահայկական երիտասարդական եկեղեցասիրաց կազմակերպության կառույցի ձևավորման ուղղությամբ կատարված աշխատանքները ներկայացրեց Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը: Տեղեկացվեց, որ 2008 թ. հուլիսի 9-14-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի կունենա Համահայկական երիտասարդական եկեղեցասիրաց կազմակերպության առաջին պատգամավորական ժողովը, ապա

կկազմակերպվեն ուխտագնացություններ Հայաստանի տարբեր թեմեր: Ժողովականները գնահատանքով ընդունեցին կատարված աշխատանքների մասին ծանուցումները՝ մեծապես կարևորելով երիտասարդության հետ տարվող Եկեղեցու աշխատանքը և նրանց գործուն ներգրավվածությունը եկեղեցական կյանքում:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը քննության առավ նաև թեմական կանոնադրության ուղենիշային փաստաթղթի նախագծին և դրա վերաբերյալ թեմերից ստացված առաջարկություններին առնչված հարցեր:

Օրակարգում ընդգրկված էին նաև ներեկեղեցական, միջեկեղեցական կյանքին առնչվող հարցեր:

Ժողովը փակվեց Վեհափառ Հայրապետի օրհնության խոսքով և «Պահպանիչ» աղոթքով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ